ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան 5 նոյեմբերի 2026 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Վարդանյանի

Անդամակցությամբ՝ Ա. Վաղարշյանի

Հ. Հովակիմյանի

Քննության առնելով «Թումո դիզայն» ՍՊԸ անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Թումո դիզայն» ՍՊԸ (այսուհետ նաև՝ Դիմող, ներկայացուցիչներ՝ փաստաբաններ Գենյա Պետրոսյան, Դավիթ Գյուրջյան) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2026 թվականի հոկտեմբերի 26-ին (փոստային ծառայությանն է հանձնվել 2026 թվականի հոկտեմբերի 22-ին), որով Դիմողը խնդրել է.

«ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը, 148-րդ հոդվածի 1-ին մասը, 149-րդ հոդվածի

1-ին մասը, 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, ինչպես նաև 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ նույն օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի, 142-րդ հոդվածի 3-րդ մասի և 149-րդ հոդվածի 2-րդ մասի հետ համակարգային փոխկապակցվածության մեջ, իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված այն մեկնաբանությամբ, որը թույլ է տալիս դատական ակտի հրապարակման համար նախապես հայտարարված օրվա էական խախտման դեպքում մերժել բողոքարկման բաց թողնված ժամկետի վերականգնումը՝ առանց դատական ակտը փաստացի ստանալու պահից հաշվարկվող ամբողջական մեկամսյա ժամկետում բողոքարկելու հնարավորությունն ապահովելու»:

2. Ներկայացնելով թիվ ՎԴ/2602/05/19 վարչական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ «Սույն դիմումով վիճարկվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի, 148-րդ հոդվածի 1-ին մասի, 149-րդ հոդվածի 1-ին մասի, 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, ինչպես նաև 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականությունը՝ նույն օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի, 142-րդ հոդվածի 3-րդ մասի և 149-րդ հոդվածի 2-րդ մասի հետ համակարգային փոխկապակցվածության մեջ՝ հաշվի առնելով վիճարկվող դրույթներին ՀՀ վճռաբեկ դատարանի 21.04.2026թ. որոշմամբ տրված մեկնաբանությունը»:

Ըստ Դիմողի՝ խնդրո առարկա վարչական գործով Վճռաբեկ դատարանը, «(...) կիրառելով (...) դրույթները, մերժել է Դիմողի՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը և բողոքը թողել առանց քննության: (...): Վճռաբեկ դատարանը բավարար է համարել դատական ակտը փաստացի հրապարակման հաջորդ օրը Դիմողին ուղարկելը և այն մինչև 20.02.26թ. բողոքարկելու հնարավորության առկայությունը՝ **որևէ իրավական գնահատական չտալով այն հանգամանքին, որ դատական ակտը չի հրապարակվել պաշտոնապես հայտարարված օրը՝ 10.12.2025թ., այլ հրապարակվել է միայն 40 օր անց՝ Դիմողի համար նախապես անկանխատեսելի ամսաթվին**: Ընդ որում, դատական ակտի հրապարակման համար հայտարարված օրվա խախտումը Դիմողի կողմից ուղղակիորեն վկայակոչվել էր ժամկետի վերականգնման միջնորդությամբ»:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված նման մեկնաբանության արդյունքում խաթարվում է դատական ակտի հրապարակման

ժամկետի իրավական որոշակիությունն ու կանխատեսելիությունը՝ այն հանգամանքով պայմանավորված, որ դատավարության մասնակիցը չի կարող կանխատեսել դատական ակտի հրապարակման օրը, հետևաբար՝ տվյալ պարագայում փաստացի վերջինիս վրա է դրվում պարտականություն՝ դատարանի կողմից պաշտոնապես հայտարարված խախտումից հետո անորոշ ժամկետով պարբերաբար ստուգել դատական իշխանության պաշտոնական կայքը, մինչդեռ դատական ակտի հրապարակման օրը նախապես հայտարարելու և հրապարակման առավելագույն ժամկետ սահմանելու օրենսդրական պահանջների նպատակն է ապահովել դատական ակտի հասանելիության կանխատեսելիությունը:

Դիմողի պնդմամբ՝ Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել այն հարցին, թե արդյո՞ք հրապարակման համար նախապես հայտարարված օրվա էական խախտման պայմաններում դատական ակտը դրա փաստացի հրապարակման հաջորդ օրն ուղարկելը բավարար է դատարանի կողմից դատական ակտի հասանելիությունն ապահովելու պարտականությունը պատշաճ կատարված համարելու համար:

Դիմողը նաև նշում է, որ տվյալ վարչական գործով դատական ակտի հրապարակման համար նախապես հայտարարված օրվա և փաստացի հրապարակման օրվա միջև 40-օրյա տարբերությունը պայմանավորված չի եղել իր վարքագծով, դատական ակտը փաստացի ստանալուց հետո ինքը ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ տվյալ պահից մեկամսյա ժամկետում՝ ներկայացնելով նաև դատավարական ժամկետի վերականգնման միջնորդություն: Ըստ Դիմողի՝ նման պայմաններում բողոքարկման ժամկետի վերականգնման միջնորդությունը մերժելը՝ առանց դատարանի կողմից հրապարակման պարտականության խախտման հետևանքների պատշաճ գնահատման, չի ապահովում անհրաժեշտ հավասարակշռություն դատական ակտերի վերջնականության և իր՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի միջև:

Ամփոփելով՝ Դիմողը եզրահանգում է. «(...) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի, 148-րդ հոդվածի 1-ին մասի, 149-րդ հոդվածի 1-ին մասի, 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, ինչպես նաև 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ փոխկապակցված կիրառման արդյունքում տրված այն մեկնաբանությունը, որը թույլ է տալիս դատական ակտի հրապարակման համար նախապես հայտարարված օրվա էական խախտման պայմաններում մերժել բողոքարկման ժամկետի վերականգնումը՝ առանց

ապահովելու դատական ակտը փաստացի ստանալու պահից ամբողջական մեկամսյա ժամկետում բողոքարկելու հնարավորությունը, հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին և 79-րդ հոդվածով ամրագրված իրավական որոշակիության ու կանխատեսելիության պահանջին, ինչպես նաև Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով, 75-րդ և 78-րդ հոդվածներով նախատեսված սահմանադրական երաշխիքներին»:

Միաժամանակ Դիմողն անհատական դիմումով ներկայացրել է իրեն պետական տուրքի վճարումից ազատելու (միջնորդությունը չբավարարելու դեպքում՝ մինչև Սահմանադրական դատարանի կողմից տվյալ գործով որոշման կայացումը պետական տուրքի վճարումը հետաձգելու) վերաբերյալ միջնորդություն այն պատճառաբանությամբ, որ վերջինս իր իրավունքների պաշտպանության նպատակով ներգրավված է եղել երկարատև դատական գործընթացներում, որոնց շրջանակներում արդեն իսկ կրել է իր իրավունքների դատական պաշտպանության հետ կապված ծախսեր, հետևաբար՝ տվյալ պարագայում իր համար առաջանում է լրացուցիչ ֆինանսական բեռ՝ երկարատև դատական գործընթացների շրջանակներում կրած ծախսերին զուգահեռ:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված **նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,** ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ դրույթն ամրագրվել է նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

*գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված **նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը**, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում **առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:*

Միաժամանակ Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում վկայակոչել Սահմանադրական դատարանի 2026 թվականի հունիսի 16-ի ՍԴԱՈ-104 աշխատակարգային որոշմամբ արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(…) իրավական նորմերի կիրառման իրավաչափության հարցերը, ըստ էության, դուրս են Սահմանադրական դատարանի քննության առարկայական սահմաններից, քանի որ դրանք վերաբերում են իրավակիրառ գործունեության օրինականության վերահսկմանը: Սահմանադրական դատարանի իրավասությունը ծագում է միայն այն դեպքում, երբ վիճարկման առարկան նորմն է, դրա սահմանադրաիրավական բովանդակությունը կամ*

իրավակիրառ պրակտիկայում նորմին հաղորդված այնպիսի իմաստը/մեկնաբանությունը, որը կարող է հակասել սահմանադրական արժեբանությանը: Հենց այս տարբերակման միջոցով է ապահովվում սահմանադրական արդարադատության և սովորական դատական վերահսկողության գործառութային տարանջատումը, ինչպես նաև պահպանվում է Սահմանադրական դատարանի՝ որպես սահմանադրականության երաշխավորի առանձնահատուկ տեղն իրավական համակարգում»:

Այս առումով Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի՝ տվյալ գործով կիրառման կամ չկիրառման, այլ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի (սույն պարագայում՝ դրույթների, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատման հարցեր**:

Քննարկվող համատեքստում հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով **Դիմողը, ձևականորեն վիճարկելով** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին, 6 և 7-րդ մասերի, 142-րդ հոդվածի 3-րդ մասի, 148-րդ հոդվածի 1-ին մասի, 149-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, ինչպես նաև 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) սահմանադրականությունը**, ըստ էության բարձրացնում է տվյալ դրույթների կիրառման իրավաչափության հարց:**

Այսպես՝ Դիմողը սույն անհատական դիմումով ներկայացրել է հետևյալ դիրքորոշումը. *«(...) ժամկետի վերականգնման միջնորդության գնահատման շրջանակներում Վճռաբեկ դատարանը պետք է անդրադառնար նաև այն հարցին, թե արդյոք դատարանի կողմից դատական ակտի հրապարակման համար նախապես հայտարարված օրվա էական խախտման պայմաններում Դիմողի համար պետք է ապահովվեր դատական ակտը փաստացի*

հասանելի դառնալուց հետո ամբողջական մեկամսյա ժամկետում բողոք ներկայացնելու հնարավորությունը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը սահմանափակվել է այն եզրահանգմամբ, որ Դիմողը դատական ակտը 2026 թվականի հունվարի 21-ին ստանալուց հետո մինչև փետրվարի 20-ը ունեցել է վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորություն»:

Դիմողը նաև նշել է հետևյալը. *«(...) սույն **վարչական գործով** Վճռաբեկ դատարանը, կիրառելով բովանդակային առումով համանման դատավարական կարգավորումները, վճռաբեկ բողոք բերելու ժամկետի վերականգնման հարցը լուծելիս վճռորոշ նշանակություն է տվել միայն դատական ակտը <u>փաստացի հրապարակման հաջորդ օրը</u> Դիմողին ուղարկելու և վերջինիս կողմից այն ստանալու հանգամանքներին՝ առանց գնահատելու հրապարակման համար նախապես հայտարարված օրվա էական խախտման ինքնուրույն իրավական նշանակությունը»:*

Ողջ վերոշարադրյալի հաշվառմամբ նկատի ունենալով նաև Դիմողի կողմից դիմումում ներկայացված մյուս դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ վերջինս **իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ՎԴ/2602/05/19 վարչական գործով ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի բովանդակության առնչությամբ:** Մասնավորապես՝ Դիմողը վիճարկվող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին, 6 և 7-րդ մասերի, 142-րդ հոդվածի 3-րդ մասի, 148-րդ հոդվածի 1-ին մասի, 149-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, ինչպես նաև 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) **հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում,** իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են խնդրո առարկա վարչական գործով **Վերաքննիչ վարչական դատարանի և Վճռաբեկ դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:**

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը եզրահանգում է, որ սույն դիմումով Դիմողի բարձրացրած հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատում, այլ թիվ ՎԴ/2602/05/19 վարչական գործով Վերաքննիչ վարչական դատարանի

և Վճռաբեկ դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափության ստուգում, որը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Հետևաբար՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման՝** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Բավարարել «Թումո դիզայն» ՍՊԸ՝ պետական տուրքի վճարումից ազատելու մասին միջնորդությունը:

2. «Թումո դիզայն» ՍՊԸ անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Վ. Վարդանյան

Անդամներ՝ Ա. Վաղարշյան

Հ. Հովակիմյան

5 նոյեմբերի 2026 թվականի
ՍԴԴԿՈ-100